Լեռնակերտ

Վարչական ղեկավար՝ Հովհաննես Հարությունյան

Հեռ: 077 95 90 17

Մակերես՝ 32,2կմ^2

Բնակչություն՝ 1400

Ինդեքս՝ 3002

lernakertgp@mail.ru

ՀՀ Շիրակի մարզի Լեռնակերտ գյուղի առաջին եկվորները 1829-1830 թվականներին գաղթել են Արևմտյան Հայաստանի Մուշից, Ալաշկերտից և այլ գավառներից: 1831 թվականին Հայաստանում անցկացված առաջին մարդահամարի տվյալների համաձայն՝ գյուղն ունեցել է 320 բնակիչ (աղբյուրը՝ Զավեն Կորկուտյանի <<Խորհրդային Հայաստանի բնակչությունը վերջին հարյուրամյակու>> 1831-1931թթ.):

Գյուղի նախկին անվանումը եղել է Շիրվանջուղ, ընդունված տարբերակներ են նաև Սիրվանջյուղ, Սիրվանջուկ: Հայկական ՍՍՀ Գերագույն Սովետի նախագահի 1948 թվականի հուլիսի 15-ի հրամանագրով վերանվանվել է Լեռնակերտ:

Գյուղը գտնվում է Արթիկ համայնքից 10 կմ հարավ՝ Արագած լեռան արևմտյան լանջին, մարզկենտրոնից 35 կմ, մայրաքաղաքից 120 կմ, պետական սահմանից՝ 40 կմ հեռավորության վրա: Գյուղում կա 4-րդ դարի եկեղեցի, հարավային և հարավարևելյան մասերում առկա են կիկլոպյան «Վարի Բերդ» և «Վերի Բերդ» ամրոցներ, դրանց շրջակայքի

բնակավայրերը և դամբանադաշտերը, Մեծ Եղեռնիզոհերի և հայրենական Մեծ պատերազմի զոհերի հիշատակին նվիրված հուշարձաններ, Արցախյան ազատամարտի հերոսներին նվիրված հուշարձան կոթող: 2006թ. կառուցվել է նոր եկեղեցի: Գյուղը գտնվում է բարձրադիր գոտում, լեռնատափաստանային ենթագոտում, որին բնորոշ են խիստ բնակլիմայական պայմանները, տարածքի ռելիեֆը հիմնականում լեռնային է՝ կտրտված ձորակների լայնցանցով: Ըստ հանրապետության տարածքի կադաստրային շրջանցման, գյուղը գտնվում է Ապարան-Հրազդան գնահատման շրջանում, իսկ ագրոկլիմայական շրջանցմամբ Շիրակի չափավոր ցուրտ, խոնավությամբ թույլ ապահովված գոտում: Բնակչությունը զբաղվում է հողագործությամբ, անասնապահությամբ: Բնակչության մոտ պահպանվում են հին հայկական ավանդույթները: https://hushardzan.am/archives/7457